

տերը բերքը կը դադրեցունէ, Սարրեան կ'ստանձնէ անոր հրատարակութիւնը, Քեչեանն ու Տ. Աղամեանը խմբագիր պանելով: Շարք օրերը հայ լեզուա մէջ մէկ խմբագրական կու տար Օ. Խօճասարեան որ իր բերքը նոր դադրեցուցած էր: Այս վերջինը էր «Նոր Գար» լրագիրին արտօնութիւնը կ'ստանայ, տպագրութիւնը կը յանձնէ Սարրեանի, վասն զի Օգոստէն իր տպարանը ցրուած էր: Կը փոխադրուին Եռասփեան խան, բայց հագի 2 շարք շարունակած՝ Օգոստէն հիւրնդնայով կը մեռնի: Միքայէլ պնտոնետե կը տպէ Հ. Աբաճաճեանի «Փունջ»ը, մինչեւ որ նուագուրդով իր վրայ կը մնան Պատրիարքարանի բոյր գործերը: Այն ատեն է որ Ս. Միքայէլեանի տղոցմէն գնելով տպարանական կազմածքն ու իր ունեցածին միացունելով, Սարրեան կը փոխադրուի Մերձան, Էօրիճիլէր ձամիսի, Բիշափ Է.Ֆ. խանի ստորնայարկը: Հոն գրաշար կ'ունենայ Գ. Չամաշքրճեան, Տ. Մանտալճեան, Յր. Բրիտապօրեան (Ռուսիա), Գ. Տիրան Փափագեան, Գրիգոր Պէյիքճեան («Մուրճ»ի գրաշարպետ), Հասրեօյի Գարրիկ, Ք. Սանճագճեան, Միհրան Բիրապճեան (այժմ Բալամարի տպարանը), Գ. Խօրօզ Տիգրան, և կ'աշտի քիչ ատենէն աւարուց դիզուած ատենագրութիւններ: Կը շարունակէ տպէ «Փունջ»ը, Յ. Պարոնեանի «Փատրոն»ն ու բազմաթիւ հայ. և տճկ. գիրքեր: — Իր տպագրական կանոնի ննագանդ անձ, յիշենք իր կեանքէն դրուագ մը միայն: Փատարան Շանկազի տաճկրնայուն առփու կիրակի օր մը



Մ. Գ. ՍԱՐԸՅԱՆ

կած է Մ. Մելիքեանի «Հայրենիք» բերքը՝ խմբագրապետութեամբ Ա. Արփիարի և աշխատակցութեամբ Նշ. Վալիտեանի, Լ. Եագմաճեանի և Գ. Լիմոնճեանի. սակայն տպագր. գործերով կարի ծանրաբեռն քանի մը ամիսէն կը դադրեցունէ զայն որ այնուհետեւ կ'անցնի վերջնապէս Յ. Շանճագարի: — Սարրեան յետոյ հաստատուած է Պապը Ալի Յ. Ասատուրեանի վերնայարկը: Գեղքին տարին, կըր Գ. Պաղպատեան կը գրկուի տպարան բանեցունելու իրաւունքէ, կը դիմէ Սարրեանի, անոր արտօնագիրով՝ իրենը կարենայ շարունակելու համար: Կառավարութիւնը շուտով հասու կ'ըլլայ այս իրադարձութեան ու կ'սկսի միշտ նեղել Սարրեանը որ վերջ ի վերջոյ կ'ստիպուի գործը փոխանցել Վ. Բանան Վ. Տեր Միխատեանի և ինք դառնայ նախկին տեղը, պարապելով միայն բատրոնի ազդերով. այս գործն այ կը յալիշակէ ձեռքէն տխրահոգակ Պապա Թահիր, դերասանապետերու ամէն սպառնալիք ընելով: Այդ դժբախտ շրջանին է որ Սարրեան կ'ընկերանայ ԳԱԼՈՒՍՏ ԳՈՅԸՔՃՏԵԱՆԻ որուն հետ նոր տպարան մը կը հիմնէ Պապը Ալի ձառուեսի, բիւ 38, (Մ. ՍԱՐԸՅԱՆ ԵՒ ԸՆԿ.), 2 տարի Գալքճեանի հետ, տարի մըն այ առանձին՝ հրատարակելով բառական դասագիրքեր Ս. Գարեանի և աւուց, Վ. Փափագեանի (Լիլա) զաւելտարքերն, Աբաճաճեանի «Փունջ»ը, Արտի խաղեր (1902), մինչեւ վերջնական փակումն իր տպարանին, գործերու ձախտոյ գնացքով: — Այժմ կ'աշխատի Ասատուրեան տպարանի մէջ:

